№ 62 Ապրիլի 7 Հինգշաբթի 1883 Ապրիլի 7 Հինգշաբթի № 62

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Русскій Курьеръ» լրագրի թղթակցութիւնը Թիւրքաց Հայաստանի մասին։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Արդուինից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲՕՐՍԱ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Հրդեհ նաւթագործարանում։

„РУССКІЙ КУРЬЕРЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Ահա ինչ է գրում „Русскій Курьеръ“ լրագրի Կ. Պոլսի Թղթակիցը։

Լորդ Դիւֆֆերինի Կ. Պոլիս վերադառնալու լուրը հաստատվում է։ Այստեղ համոզված են, որ անգլիական դեսպանին յանձնարարած է պահանջները ներկայացնել Բ. Դրանը Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի կատարված չը լինելու առիթով։ Եւ ճշմարիտ է, որ ժամանակ է արդէն այդ տեսակ պահանջներն անելու։ Լուրերը Թիւրքաց Հայաստանից շատ միխիթարական չեն Թիւրքաց տեսակէտից. Թիւրքերի դէմ ապստամբվելու միտքը օրից օր աւելի և աւելի է տարածվում հայերի մէջ։ Դեռ Կ. Պոլսի երէկվայ լրագիրները հաղորդեցին որ Արմենիայում վեց հոգի հայ քահանաներ կալանաւորված են և Դիարբէքիրի բանտ են դցած։ Այդ քահանաներին մեղադրում են այն բանի մէջ, որ նրանք շրջում էին գիւղից գիւղ և քարոզում էին հայ ազգաբնակութեանը ապստամբութիւն Թիւրքիայի դէմ։ Երզրումից մեր ստացած տեղեկութիւնները նոյնպէս նպաստաւոր չեն Թիւրքերի համար։ Յաւելի է միայն, որ հայոց պատրիարքը չէ կամենում որ այդ նորութիւնները հաղորդվեին օտար լրագիրների թղթակիցներին. բայց այն, ինչ որ, այնու ամենայնիւ, մեզ հասաւ ստոյգ աղբիւրներից, բաւական հետաքրքիր է։ Հայ կալանաւորվածները, թւով 54 հոգի, դեռ ևս ազատված չեն, չը նայելով որ մեծ վիշիրը պաշտօնապէս խօստացել էր նրանց ազատելու։ Ընդհակառակն, բանտարկվածների վիճակը վատթարանում է օրից օր և նրանց հետ շատ վատ են վարվում. ասում են որ 28 ժամվայ ընթացքում նրանց ոչինչ կերակուր չէին տալիս, իսկ ոստիկանութիւնը անդադար նեղացնում է նրանց ընտանիքներին։ Բանտարկվածները, այնու ամենայնիւ չեն խոնարհվում. նրանց աջողվեցաւ, մինչև անգամ, նոյն իսկ բանտից, ուղարկել Բ. Դրանը մի եռանդոտ բողոքագիր, որի մէջ նրանք պահանջում են Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի իրագործումը։ Նրանք յայտնում են որ ուրախութեամբ պատրաստ են մեռնել, հաւատի լինելով որ իրանց մահով կը տան Արմենիային պայմանագրված վերանորոգութիւնները. նրանք նմանապէս և այն են յայտնում, որ իրանց քաղաքական համոզմունքների թիւը շատ մեծ է և նրանք Թիւրքիային հանդիստ թողնելու չեն։ Այդ բողոքագիրը Թիւրքաց մինիստրների մէջ մեծ վրդովմունք պատճառեց։ Պատերազմական մինիստր, Գազի-Օսման-փաշան, յայտնեց պատրիարքին որ Բ. Դրանը շատ լաւ յայտնի է ամեն բան որ կատարվում է Արմենիայում, որ այնտեղ 300,000 հայեր պատկանում են այն գաղտնի ընկերութիւններին, որոնք նպատակ ունեն Արմենիայից երկրորդ Բոլգարիա դարձնել, որ այդ գաղտնի ընկերութիւնները ունեն ամբողջ Արմենիայում բաժիններ, որոնք նոյն իսկ Երևանի միջոցով կապ ունեն և Թիֆլիսի հետ։ Ինչպէս միշտ, այստեղ ստոյգ երկիւղ են կրում Ռուսաստանի ուրուականից։ Բայց, չը նայելով գործերի այդ տեսակ դրութեան, Բ. Դուռը, այնու ամենայնիւ, դիտաւորութիւն չունի բաւականութիւն տալ հայերին։ Նա պահանջում է պատրիարքից, որ սա արձակի Երզրումի եպիսկոպոսին, Բայց պատրիարքը բացարձակապէս մերժեց այդ պահանջման կատարումն։ Երզրումի նահանգապետը մեղադրում է տեղական առաջնորդին, որ նա իբր թէ Ռուսաստանի ազենտ է։ Ուրիշ կողմից Կ. Պոլսի օտար դեսպաններից մի քանիս խնդրում են Թիւրքաց կառավարութենից, որ նա պաշտօնից արձակի Երզրումի նահանգապետին, Մուստաֆա-փաշային, որ մի ժամանակ պատերազմական մինիստր էր։ Դուռը հրաժարվեց այդ խնդիրքը կատարելու։ Բայց այնու ամենայնիւ, երկուսից մին. կամ Երզրումի նահանգապետը, կամ առաջնորդ եպիսկոպոսը (Օրմանեան) պէտք է հրաժարվեն իրանց պաշտօնից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Մարտի 31-ին

Անցեալ նամակով ևս յիշած էի թէ տեղւոյս հայ-լուսաւորչականաց Սահակեան ուսումնարանում թեմական տեսչութեան գործակից պ. Կ. Կամսարական մի նոր կարգադրութիւն էր արած, որով պիտի բացարձակ յայտնվեր ժողովրդի համակրութեան չափը դէպի այդ ուսումնարանը։ Նրա կարգադրութիւնը բաւականի յաջողութիւն դաւ, ուսումնարանն այժմ ըստ առաջնոյն, կարգաւորեալ շարունակվում է. հեռացան ուսումնարանից միայն խռովարարների երեխաները։ Այժմ պ. Կամսարական Արդուինի դաւառի ուսումնարանները փոքր ինչ կարգի տակ ձգելու համար դուրս է գնացած գաւառը, իր պաշտօնական գործերի հետ միասին այդ դպրոցական բարենորոգումներին էլ ուշադրութիւն դարձնելով։

Արդուինից «Մշակին» գրված թղթակցութիւնների մէջ քանի մը անգամ յիշված է թէ Արդուին քաղաքի ազգաբնակութեան մեծամասնութիւնը՝ իսկ Արդանուչ գիւղաքաղաքի բնակչաց գրեթէ ամբողջը հայ-կաթոլիկ են։ Բայց թէ դրանց ուսումնական զարգացումը շատ ետ է մնացած դեռ, այդ ևս էլ է յայտնի. եթէ նրանց այդ զարգացման զարկ տուող մի ինչ պատահելու լինի, թղթակցի պարտականութիւնն է այդ մասին ևս, ըստ կարելւոյն, տեղեկութիւն տալ կանխակալ նախապաշարմունքից հեռու լրագրին։ Վասն զի կաթոլիկ-հայերը հայոց ազգաբնակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԴԵՀ ՆԱՒԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

—

(Մի կտոր իմ վէպից)

Ցանկարծ ամենայն ինչ պարզվեց և նրա առաջ բացվեցաւ մի ողբալի տեսարան։ Այս ու այն կողմ թաւալվել էին թով մինչև վեց մշակների դիակներ։ Երևում էին նոյնպէս և ոտի վրա մի քանի ուրուականանման պատկերներ, որոնցից մէկը բոցավառված, խելագարի պէս այս ու այն կողմ էր վազվզում բացականչելով.

—Օգնեցէք... հայ քրիստոնեաներ... օգնեցէք... խղճացէք... մարմինս այրվում է... չուտ... չուտ հող ածեցէք վրաս... ջուր... ջուր... ջուր... ուֆ.. ուֆ Աստուած, սիրտս այրվում է.., եփվեցի... խաշվեցի... խորոված դառայ։

Տեսարանը սոսկալի էր։

Սա տարիքը անցկացրած մի ծերունի էր, որի գիւրաբորբոք ցնցոտիները բոցավառվել էին և խաշում էին նրա մարմինը կենդանի, կենդանի, ինչպէս միջնադարեան ինկվիզիցիայի թշուառ զոհերից մէկը։

Իվան Գրիգորիչը երեսը շուռ տուեց, նրա նրբացած ջղերը անզօր էին դիմանալ մի այդպիսի այլանդակ պատկերի առաջ։ Ամբոխի միջից շատերը սիրտ առնելով վազեցին առաջ. ուժեղներից մէկը ոտքի մի զօրեղ հարուածով բոցավառված ծերունուն գլորեց գետինը, մնացեալները սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մարմինը կիսակենդան թաղելով ողորմելի զառամեալին։ Այդ միակ միջոցն էր, որով միայն հնարաւոր էր հանգցնել նրա այրվող ցնցոտիները։

—Խաշվեցի... ուֆ... ուֆ... այրվեցի... խուլ ձայնով հառաչում էր ծերունին հողի տակից։ Նրա դէմքը այնչափ այլանդակվել էր, որ ներկայ եղողներից շատերը կէս սարսափով և կէս զզուանքով ծածկում էին իրանց աչքերը նրան չը տեսնելու համար։

—Ուֆ... ախ Աստուած, չուտ առ հոգիս... ազատիր տանջվելուց... մի չարչարի—չարունակում էր ծերունին թաւալվելով հողի տակ։ Բայց որդիս... Բէյրութը... ուր է նա... ուր ես որդի... Բէյրութ դու էլ կորար... դու էլ այրվում ես... հօրդ նման... վայ... վայ... վայ... որդի... եկ, դու էլ խաշվում ես. վերջին անգամ հօրդ տես, նա մեռնում է... կինս... որդիքս... աղջկերք... ջուր... ջուր... ուֆ սիրտս այրվեց...

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ ծերունու ձայնը աստիճանաբար փոխվում էր, հեղհեղ թուլանալով։

—Այստեղ եմ, հայրիկ... դու ինչտեղ ես... որդիդ մօտ է գալիս—գոռաց մի տասնեւութ, քսան տարեկան երիտասարդ ձախ ձեռքի վրա յենած իր աջ թևը, որի այրված կաշին պլոկվելով մերկացրել էր կարմիր միսը։—Ա՛խ... ախ... կծկում է սիրտս... ուֆ, Աստուած սիրէք, մի մօտենաք թեւիս... նա այրվում է... ուֆ... ուֆ... վայ... այս ով կայաւ ինձ... մի մօտենաք, Աստուած սիրէք... թեւս... թեւս... կծկում է։

—Հեռացիր թշուառ, մի մօտենար հօրդ. քեզ տեսնելով խեղճ ծերունին կսկծից կը մեռնի—բացականչեցին ամբոխի միջից։

—Բայց ուր է նա... Աստուած սիրեւ, թոյլ տուէք ինձ նրան տեսնել... նա դուցէ մեռնում է... թող գոնէ վերջին անգամ տեսնվենք միմեանց հետ։

—Բէյրութ... Բէյրութ... եկ, այստեղ եմ... մօտեցիր մեռնում եմ... ոհ... ոհ... այրվեցի... պապակվեցի—բառանչեց ծերունին կամենալով ոտի կանգնել։

Մի քանի վայրկեան հայր և որդի չը կարողացան ճանաչել իրարու։ Ծերունու ալեւոր միրուքը խանձվել էր և երեսում կուչկուչվել։

—Ամա՛ն... այս ինչ օրի ես ընկել, հայրիկ, ասեց որդին խելագարի պէս արձակվելով չոքած ու ծունկերի վրա թաւալվող ծերունու վրա։

—Օ... օ... օ մի կպչիր մարմնիս... նա այրվում է... կծկծոց է տալիս... հեռուից... հեռուից խօսիր։

—Կուրանան իմ աչքերը... այս ինչ եմ տեսնում ես... այս ինչ կրակ է... ա՛յ... ա՛յ... ա՛յ... թեւս... թեւս, մի կպչէք ինձ Աստուած սիրէք։

—Այս ինչ եմ լսում որդիս... Բէյրութ... դու էլ... դու էլ ես այրվել։

Մի վայրկեան ծերունին մոռացաւ իր այրված մարմնի կսկիծը և երկու ձեռքերով մեքենաբար փաթաթվելով որդու վզին շարունակեց աղերսել։

Մինչդեռ սրանք, հայր ու որդի, հեծեծալով զբրկած իրարու անտանելի ցաւի և կսկծանքի դառն լեղին, մի քանի քայլ նրանցից հեռու կատարվում էր մի ուրիշ աւելի ողբալի դրամա։

Իբրև դժոխային անդունդի յատակից վեց դիաթաւալ մշակների միջից լսվում էին սիրտ պատռող մորմոքաձայներ և այդ չէին նմանվում մարդկային ձայների, այլ մորթվող անասունների վերջին բառանչումներին և յուսահատ թաւալվածներից երկուսը արդէն անշնչացած էին. նրանց այրված ու այլանդակված դէմքերը այլ ևս չէին կրում իրանց վրա մարդկային դէմքի ոչ մի նշան, նրանց աչքերի բիբերը դուրս էին ցցվել իբրև խորոված չաղանակներ մոխրի մէջ։ Գլխի ու երեսի մազերի ու յօնքերի հետքերը անգամ չը կային. նրանց գլուխները նմանվում էին թէժ կրակի միջից դուրս քերած մսի կտորների։ Զորս մարդիկ աշխատում էին սրանց դիակները մի կողմ քաշել։

Մի քանի քայլ հեռու այդ դիակներից մի երիտասարդ մշակ նստած գետնի վրա, իր ձեռքերը հողի մէջ տրորելով, բացականչում էր։

Ձեռքերս... ուֆ... ուֆ... ձեռքերս... խաշվեցին... պապակվեցին... Տէր Աստուած... բայց իզուր... իզուր... նա մոխիր դառաւ... մնաւ նա... իմ այրվող ձեռքերը չը կարողացան ազատել նրան... իմ հօրեղբայրը... ոհ այն ինչ սարսափելի մահ էր, որով նա մեռաւ... երանի... երանի... հազար երանի կը լինէր եթէ նա հինգ տարի առաջ գիւղումը... իր ընտանիքի, իր զաւակների մօտ փչէր իր հոգին սառը անկողնում... քան թէ այդ խայտառակ գեհենի մէջ... ուֆ... ջուր... Աստուած սիրէք, փոքր ջուր... սիրտս այրվում է... չոր է... չոր... ուֆ։ Նրա թէժացած աչքերից գլորվեցին արտասուքի մի քանի կաթիլներ և նա ձեռքերը տանելով դէպի աչքերը թոչեց նրանց իր պլոկված մատների ծայրերը, կարծես թէ այդ աղի կաթիլները կարող էին զովացնել նրա սիրտը։

Սրանից մի փոքր հեռու լսվում էին խուլ աղօթքի ձայներ։

—Ո՛վ միակ Աստուած և դու, Մուհամմէդ նրա մեծ մարգարէն, տեսնում էք ձեր սուրբ աչքերով, որ մենք ինչ սարսափելի կերպով ենք տալիս ձեզ մեր հոգին, ընդունեցէք նրան և մոռացէք մեր հազար ու մի մեղքերով լի անցեալը։ Մենք այրվեցինք այս աշխարհում դեւերի պատրաստած կրակում, բայց գթացէք մեզ վրա և մի թողէք, որ այն կեանքում ևս այդպէս այրվենք ու խաշուենք։ Լայ... լայ, Իլլալլահ, Մուհամմադ Բասուլ Ալլահ... Ուֆ՛ի ջհաննամ...

Այդ պարսիկ մշակներն էին, որոնցից մէկի գըլուխը քարը ջարդելով երկու պատառ էր արել և փչում էր իր վերջին շունչը, իսկ երկուսի նոյնպէս զանազան տեղերը ջարդվել էին մահացու վէրքերով։

Ամբոխը խառնվել էր այնպէս, որ ոչ ոք այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում հրդեհի վրա, որը այդ ժամանակ սկսել էր փոքր առ փոքր մեղմանալ։

Իվան Գրիգորիչը գոռում էր. Աստուած սիրէք... օգնեցէք... հրդեհը... հրդեհը մի մոռանաք նրան... այդ վիրաւորվածներին յետոյ էլ կարելի է ժողովել, բայց գործարանս, գործարանս, նա ձեռքից գնում է. նա այրվեց, վերջացաւ, տունս քանդվում է, ի սէր Աստուծոյ խղճացէք։

Բայց Իվան Գրիգորիչի գոռոցների վրա ուշադրութիւն դարձնողներ քիչ եղան, աշխատում էին

թիւնից անջատված, հայ ազգից բաժանվող և լատինականութեան գրկումն ընկող հասարակութիւն չեն, ինչպէս կարծում է և քարոզում հայոց խաւարասէր մամուլը: Կաթոլիկ հայը, աւետարանական հայը, թէկուզ, անկրօն հայը հայ ազգի որդիք են: Նրանց սիրտը՝ ինչպէս ճշմարիտ լուսաւորչականի, բաբախում է և կը բաբախէ հայոց ազգի յառաջադիմութեան, լուսաւորութեան համար: Հետևաբար, առանց մոռցից անցնելու թէ այս ինչ տեղի հայ ժողովուրդը ինչ կրօնի, ինչ դաւանութեան է պատկանում, հարկաւոր է, որ մարդ տեղեկանայ նրա կեանքի, ծանօթ լինի նրա նիւթական կամ մտաւորական և բարոյական կամ ուսումնական դրութեան հետ: «Մշակի» Արզումնի թղթակիցը՝ տոգորված լինելով բոլորովին այդ դաղափարով, այդ առաջադէմ սկզբունքով՝ այդ նպատակաւ էլէ տուել ընթերցող աշխարհին՝ տեղեկութիւններ կաթոլիկ հայոց (նոր գրաւածնահանգների) ուսեալների, հոգևորականների, ղեղրոցների, մտաւորական վիճակի և ընտանեկան կեանքի մասին և հետզհետէ պիտի տայ էլ դեռ:

Արզումնի կաթոլիկ հայոց եպիսկոպոսական անմիջական հովանաւորութեան ներքև լինող եկեղեցին, ունի կալուածներ, մանաւանդ առնելիքներ, որոնք հասնում են 40—45 հազար մանէթի պատկառելի դումարին: Բայց այդ առնելիքները՝ մեծ մասամբ երեցփոխանների, ախոռականների թուլութիւնից մինչև հիմա բոլորովին անօգուտ կերպով և ապարդիւն մնացած էին: Այժմ, վերապայծառ Զաքարեան՝ տեսնելով ուսումնարանի անկարգ և ապարդիւն դրութիւնը՝ մեծ ջանք է առնում այդ եկեղեցականատան պահանջներն հաւաքելու, որպէս զի դրանց արդիւնքով, կարողանայ մի բարեկարգ ուսումնարան պահպանել: Այդ նպատակաւ, ժողովրդի ընտրութեամբ նշանակված է մի յանձնաժողով, որ ամենայն օրինաւոր միջոցներ պիտի ձեռք առնու առնելիք դումարների ստացման համար: Ի սրտէ համակրելով վերապայծառի և յանձնաժողովի այդ ազնիւ նպատակին, ցանկանում ենք լիովին յաջողութիւն սրբազան առաջնորդի այդ մտադրութեան և յանձնաժողովի աշխատանքին:

Անցեալ տարի, վերապայծառ Զաքարեան՝ Արզանուչ գտնված միջոցին, մի եղբայրութիւն հաստատեց՝ որին մասնակցող անդամների նուիրատվութեամբ պիտի կազմվէր մի դրամագլուխ, Արզանուչում բարեկարգ օրիորդաց ուսումնարան հիմնելու համար: Արզանուչի 180 տանից բաղկացած հայ-կաթոլիկ ժողովուրդը միաձայն համակրեց այդ գործին: Ընտրվեցան ժողովրդից և գերապայծառից հաստատվեցան հոգաբարձուք պ. պ. Ռոստակեան, Աբրահամեան և Մարիկեան: «Ս. Աստուածածնայ անարատ Յղութեան եղբայրութեանը»,—այդպէս է կոչվում եղբայրութիւնը—ամենից առաջ մատնակցեցաւ Արզանուչի հայ իգական սեռը և ապա արականը սկսան անդամակցել: Միասին առնելով նաև այն գումարն որ թէպէտ սաղարգրված է, բայց դեռ չէ գանձված, այսօր հաւաքված է մօտ 900 ռուբլի. բայց նուիրատուութիւնը չարունակվում է և բացի այդ, ուրիշ միջոցների էլ է ձեռնարկված եղբայրութեան օգուտը, արդիւնքը ավելացնելու համար: Յոյս ունենք որ գերապայծառ Զաքարեան այս յիշեալ գործերն ինչ եռանդով որ սկսած է, այնպէս էլ առաջ կը տանէ:

Շ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են: «Տեղիս ծբխական եկեղեցում նշանակված է քարոզիչ Սահակ վարդապետ Բաղդասարեանց: Գերապատիւ հայր-սուրբը ամենայն կիրակի օր առաւօտեան ժամասացութեան ժամանակ իր կենդանի խօսքով մերկացնում է մեր հասարակութեան բոլոր թերի և անբարոյական կողմերը: Շնորհակալութիւն քարոզչին, որ նա փոխանակ ղժոխքի սարսափների վրա խօսելու, ազատօրէն մտրակում է հասարակութեան մէջ գործող թէ աշխարհական և թէ հոգևորական անձանց վատ կողմերը, որոնք իրանց պաշտօնի մէջ թոյլ են գտնվում և չեն համապատասխանում ժողովրդի ներկայ բարոյական պահանջներին:»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ պ. Կ. Աղամեանց, տեղային հայոց ղպրոցի հոգաբարձութեան կողմից յայտնում է շնորհակալութիւն այն պարոններին, որոնք նուիրել են ղպրոցին հետևեալները. հաշտարար-միջնորդ պ. Տէր-Մարտիրոսեանցին, որ նուիրել է մի հատ պատի ժամացոյց և հինգ հատ զանազան գրքեր, թեմական տեսուչ պ. Պռոշեանցին, որ նուիրել է երկու օրինակ «Վարժարան» ամսագրի և վերջապէս պ. Բաֆֆիին, որ նուիրել է իր «Կայծերի» առաջին հատորի մի օրինակ:

—

Պ. Աւետիք Տէր-Յակովբեան խնդրում է մեզ տպել հետևեալը: «Գրեթէ ամեն օր Կովկասի և Ռուսաստանի զանազան քաղաքներից ինձ դիմում են և խնդրում են իմ աշխատասիրած «Հայրենագիտութիւն», «Հայաստանի աշխարհագրութիւն» և միւս գրքեր: Ես մինչև այժմ ամենքի խնդիրը կատարած եմ, բայց այժմ Ներսիսեան ուսումնարանում իմ առարկաներից տարեկան հարցաքննութիւնները վաղ սարտելով, ուղևորվում եմ արտասահման, ուստի խնդրում եմ այսուհետև ոչոք ինձ չը դիմի գրքերի համար, այլ դիմի ուղղակի հետևեալ հասցէով: «Тифлисъ, Кавказская книжная торговля» կամ «Тифлисъ, Центральная книжная торговля.»

—

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքի մի ռուս վաճառական, պ. Սալոմին, խնդրեց մեզ որ ուղարկենք նրան «Մշակի» համարները այդ քաղաքում հատով ծախելու համար: Մենք կատարեցինք պարոնի խնդիրքը և ապրիլի 1-ից ուղարկում ենք նրան «Մշակի» համարները:

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են հետևեալը: «Մարտի 25-ին, գիշերը, անյայտ չարագործներ սպանեցին քաղաքիս ծայրում մի խրճիթի մէջ բնակվող մի գաղթական հայ կնոջ, որի երկու փոքրիկ զաւակները այժմ մնացել են անտէր և առանց խնամքի: Այդ սպանութեան գործը հեռատեսվում է. կասկածը ընկել է մերձակայ Դալուզարդաշ գիւղի մի բնակչի վրա, որ և կալանաւորված է արդէն:»

—

Մենք լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան իր միջից կազմված յանձնաժողովը, արդէն վերջացրել է իր պարապմունքները: Ասում են որ յանձնաժողովը, որի պաշտօնն էր քննել Ներսիսեան դպրոցի այժմեան դրութիւնը, հոգաբարձութեանը իր ներկայացրած վերջնական զեկուցման մէջ յայտնում է իր այն կարծիքը, որ դպրոցի այժմեան տեսուչը և նրա վարժապետների մեծ մասը անյարմար են իրանց ստանձնած պաշտօնների համար:

—

Կարսի նահանգի Թօրասանի վիճակի ԲԱՇԳԻԻՂ ասված գիւղից մեզ գրում են հետևեալը: «Վերջին ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ, երբ ռուսաց զօրքերը վերջին անգամ յետ էին քաշվում Կարինից, նրանց հետ միանալով այնտեղերի զանազան գիւղերից հայ ընտանիքներ, որոնք այլ և այլ պատճառներով չէին կարող կրկին թիւրքահպատակ մնալ, եկել թափվել էին Կարս: Մի ժամանակ այնտեղ ապրելուց յետոյ ռուս կառավարութիւնից նրանց հողեր յատկացվեցան, որոնց վրա կառավարութիւնը և բնակեցրեց նրանց: Այս հայ գաղթականներից մօտ 40 տուն բնակված են Թօրասանի վիճակի Ղօշաքիլիսա և Շաղաան գիւղերում. սրանք դեռ ևս թիւրքերից կողոպտված և հարստահարված լինելով, մինչև հիմա, ինչպէս և այլ գաղթականները, կարողացան ապրել ռուսաց կառավարութեան օգնութեամբ և ազգի նպաստներով: Իսկ այժմ յայտնվեցաւ որ նրանք դարձեալ մեծ կարօտութեան մէջ են: Հայ գիւղերում մարդասիրական զգացումը աւելի կենդանի մնացած է երևում, քան քաղաքներում, սակայն և այդ զգացումը կարօտ է մէջտեղ առաջնորդվելուն: Գաղթականների այդ կարօտ վիճակը տեսնելով, Արմալու գիւղի քահանայ տէր Յակովբ Մարկոսեանց, անմիջապէս սկսեց յորդորել Արմալուի և Բաշգիւղի հայ ժողովրդին կարօտեալներին օգնելու: Եւ ահա հանգանակութիւն անելով մէջներում, այդ գիւղերի հայ բնակիչները հաւաքեցին 160 պուդ հացաբոյս և յանձնեցին տէր-հօրը, որպէս զի կարօտեալներին բաժանի:»

—

«Մշակի» անցեալ և ներկայ համարում տպելով պ. Շիրվանզադէի վէպի մի կտոր, «Հրդեհ նաւթագործարանում» դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը այդ գեղեցիկ պատկերի վրա:

—

«Երևանի Յայտարարութիւններ» թերթի մէջ կարդում ենք հետևեալը: «Լսում ենք թէ ս. Սինոդը հեռագիր է ստացել գլխաւոր կառավարութենից, որ իր առաջարկութեանը համաձայն կաթողիկոսական ընտրութիւնը նշանակվել է եկող 1884 թուի մայիսի 27-ին:»

—

Նոյն թերթում կարդում ենք որ մարտի 10-ին պարսից փօստը կողոպտվեցաւ, դեռ ռուսաց սահմանին չը հասած:

—

Այս օրերս սպասում են ԹԻՖԼԻՍՈՒՄ կովկասեան կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովի գալուն:

—

«Մշակի» հետ ուղարկեցինք մեր գաւառական բաժանորդներին ռուսերէն լեզուով մի թերթ, որի մէջ նկարագրված է Singer Manufacturing Company, New-Iork ընկ. կողմից սկսած դատաստանական գործը նախկին Ֆրիտեր և Բօսման անուանված կարմիքենաների Բերլինի ակցիոներական միայն նրա հարևան գործարանատէրերի մշակները, որոնց տէրերը ստիպում էին չը հեռանալ գործելուց, մինչև որ բացը չի դաղարի իրանց գործարաններին վտանգ սպառնալուց:

—Մենք չենք կարող այս թշուառներին անտէր, անօգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել գուռում էին ամբոխի միջից դէպի Իվան Գրիգորիչը—եթէ այդքան մարդիկ զոհ են դառնում մի բոպէում հրդեհին, ուրեմն թող նա անխնայ լափէ քո անիծեալ գործարանդ էլ, քեզ էլ, որ այդ թշուառ զոհերի կորստեան պատճառներն էք:

—Այո՛, այո՛, դու ես դրանց այրվելու պատճառը, եթէ դու ժամանակին քո անիծեալ նաւթակաթսաները և վառարանը չմնել տայիր, այդ դժբաղդութիւնը չէր պատահի ոչ քեզ, ոչ էլ այդ խեղճերին:

Գործակատարը, որ Իվան Գրիգորիչին չուաքի նման հետևում էր, ուր նա վազվզում էր, դարձաւ դէպի նա և ասեց.

—Իւան Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կանգնել այդ չարամիտներից, ով գիտէ ձեզ ինչ ինամ կը հասցնեն, նրանք մեր մշակների ընկերակիցներն են, նրանք այժմ գազանացած են և Աստուած գիտէ թէ ինչեր չեն մտածում:

Բայց Իւան Գրիգորիչը բանի տեղ չէր դնում ոչ ամբոխի սպառնալիքը և ոչ էլ իր գործակատարի խորհուրդը. նրա ուշը ու միտքը կենտրոնացած էր միայն և միայն հրդեհի վրա և նա ամբողջ մարմնով դողում էր թէ ահա կրակը հասնելու է ֆօտոգէնով լիք տակառների պահեստին, ուր մօտ հազար լիք տակառներ կային: Սակայն այդ երկիւղը ավելորդ էր, որովհետև հրդեհը այլ ևս այնպէս սաստիկ չէր, ինչպէս տասը բոպէ առաջ, կարծես թէ նա իր վրէժը արդէն հանած համարելով կամենում էր հանգստանալ:

Քամին դադարել էր, բացը այլ ևս կատաղաբար այս և այն կողմը չէր տարածվում, այլ հանդարտ ու ուղիղ գծով բարձրանալով վեր, լուսաւորում էր ներկայ եղող ամբոխը, որը զումարված թշուառների շուրջը զանազան օգնութիւն էր հասցնում այդ խեղճերին:

Այդ ժամանակ ամբոխին վազելով մօտեցաւ յանկարծ մի բարձրահասակ մարդ, որի սև դէմքի վրա նկատելի էին խորին յուսահատութեան և անորոշ երկիւղի նշաններ: Նրա ծունկերը ծալվում էին և դժուարութեամբ էին հնազանդվում նրա գնացքին:

Սա արդէն մեզ յայտնի լրարերն էր:

—Թողէք... թողէք տեսնեմ ուր են... ուր են որդիս.. եղբայրս.. Աստուած իմ... նրանք ուր են... մինթէ... մինթէ այրվել, վերջացել են նրանք... մինթէ գիակներն էլ անգամ չեն ազատվել:

Ամբոխը ճանապարհ տուեց նրան և նա չատալով մտաս մէջ տեղ:

—Ո՞ւր է, որտեղ է, խօսացէք... Սարգիս... Գասպար... Ո՛հ, այս Բէհբութն է, իմ եղբօր որդին.. Ո՛հ, մինթէ դու էլ, դու էլ ես այրվել, Բէյբութ...

—Ե՞ս... Այո՛... բայց իմը ոչինչ, խեղճ հայրս, ծերունին... նա մեռաւ... ահա նա... մեռաւ նա, մինչև վերջը... իր ընտանիքի անունը յիշելով... նա վերջին շունչը փչեց քո անունդ տալով... «գոնէ մինչև իմ եղբօր «Մէհրաբի» վերադառնալը ապրեմ» կրկնում էր նա հոգին փչելով:

—Ո՞ւր է նա, ցոյց տուր ինձ նրա դիակը, բայց իմ որդին, Սարգիսը, նա որտեղ է:

—Այստեղ եմ, հայրս... ոհ, մի մօտենար աղաչում եմ ձեռքս, նա այրվում է... կծկծում է... մի կրպչիր ձեռքերիս... ուֆ, ուֆ, թես:

—Վա՛յ, իմ աչքերին, այս ինչ եմ տեսնում ես... կուրանամ ես... այդ ինչ են դառել քո ձեռները Գասպար:...

Մէհրաբը մօտեցաւ իր որդուն, բայց վերջինը արտասուքը աչքերում ցոյց տուեց նրա եղբօր՝ ծերունի Սարգսի դիակի վրա: Մի բոպէ Մէհրաբը մնաց քարացած, նրա արտասուքից չոր ու ցամաքած աչքերը մեքենաբար դառնում էին կամ իր ծերունի եղբօր դիակի վրա, կամ որդու, Գասպարի այրված ու կուչ եկած ձեռքերի վրա, կամ իր եղբօր որդի Բէյբութի կաչուից մերկացած աջ թեւի վրա: Իսկ ամբոխի դայրացած ուշադրութիւնը նրա վրա էր:

Այդ տարօրինակ դիրքում նրա ածխագոյն դէմքը ու բարձր ու բարակ հասակը պատկերացնում էր մի մռայլ մարմարենայ արձան, որի միայն բոցավառ աչքերն էին խանդարում ընդհանուր անշարժութիւնը: Երեք սուր դաշոյններ միաժամանակ ցցվել էին նրա կուրծքի մէջ, որոնցից մէկը, եղբօր մահը, թափանցել էր մինչև սրտի խորքը խլելով արիւնը գլուխը:

—Ո՞ւմ մեղքն է... ո՞վ է պատճառը այս զոհերի... ումից կարող եմ առնել վրէժը... մինթէ կըրակից... բայց ինչպէս... վառել ու գլխիվայր թաւալվել նրա մէջ—ահա ինչպէս կարելի է վրէժխնդիր լինել... ահա ինչը կարող է մխիթարել ինձ...

Այս ասելով նա երկու ձեռքերով սկսեց ուժգին հարուածներ տալ իր բաց, ալեխառն մազերով ծածկված գլխին: Ամբոխի մէջ չատերի աչքերից արտասուքի աղբիւրներ էին թափվում:

—Վա՛յ... վա՛յ եղբայր.. վայ եղբայր... ես ինչ պատասխան տանեմ քո զաւակներին... ես ինչ պիտի ասեմ քո պառաւ կնոջ... նրա աչքը ճանապարհն է մնացել... նա սպասում է իր ծերունի մարդուն, որը՝ հեռու քաղաք է գնացել փող վաստակելու. լաւ վաստակեցիր... լաւ կը վայելեն քո եօթը զաւակները, որոնցից ամենամեծը ահա այստեղ անդամալոյծ է դառել:

Իւան Գրիգորիչը լսելով այդ գոռացը, մօտեցաւ մի բոպէ ամբոխին:

—Ինչ ես այստեղ գոռգոռաց բարձրացրել խելագար... ինչ բղռեալու ժամանակ է... գործարանս ձեռից գնում է, դու այստեղ գոռում ես. վազիր, ասում եմ, օգնիր այնտեղ:

Մէհրաբը ոչինչ չէր լսում, նա երեսիվայր ընկած իր եղբօր դիակի վրա բառանչում էր: Ամբոխը մնաց զայրացած Իվան Գրիգորիչի անտեղի հրամանի վրա:

—Նրա եղբայրը այրվել մոխիր է դարձել, նրա որդու ձեռքերը իր հօրեղբօր ազատելու ժամանակ խորովվել են, նրա եղբօր որդու աջ թեւը կուչ է եկել այրված, իսկ դու այժմ, այդ դժբաղդից օգնութիւն ես պահանջում, անխիղճ, անաստուած. նա այդ թշուառութեանում ինչպէս կարող է օգնել քո անիծված գործարանին—գոռացին ամբոխի միջից մի քանի տաք գլուխներ:

—Մի և նոյն է, էլ այսուհետև նրա գոռալը օգուտ չի տայ. թող կրակը հանդարտվի, այնուհետև ինչքան կամենայ կարող է գոռալ: Վերկայ, ասում եմ—դարձաւ նա Մէյրաբին իր կօշիկի ծայրով մի հարուած տալով նրան:

Մէյրաբը մեքենաբար գլուխը բարձրացրեց, դառն տանջանաց կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա, աչքերը փայլում էին ներքին հոգեկան վշտերի կայծերով: Դէմքը արտայայտում էր խելագար բարկութիւն, նա նմանում էր այդ դրութեան մէջ մի կատաղի և յուսահատված առիւծի, որը պատրաստվում էր յարձակվել իր թշնամու վրա:

Մի վայրկեան նա այդ անշարժութեան մէջ մընաց. Իվան Գրիգորիչը կէս բարկացած և կէս երկիւղալի դէմքով շուարված նայում էր նրա վրա:

Ցանկարծ Մէյրաբը կայծակի արագութեամբ վեր թռաւ տեղից...

—Այո՛.. ճշմարիտ է ասում աղան, պէտք է նրա հրամանը կատարել, պէտք է օգնել, ես պարտաւոր եմ աշխատել:

Նա կամեցաւ առաջ չարժել, բայց ծունկերը չը հնազանդվեցին, գլուխը ծանրութիւն արաւ և նրա վիթխարի մարմինը կայծակնահարի նման անշնչացած թաւալվեց Իվան Գրիգորիչի ոտքերի առաջ, իր եղբօր սնացած դիակի վրա:

—Գործարանս. գործարանս.. Աստուած սիրէք, նա փչանում է.... տունս քանդվեց:

Շիրվանզադէ

ընկերութեան դէմ։ Այդ դատաստանական գործը տևեց 5 տարի և նրա համար ծախսվեցաւ 300,000 մարկ։ Անցեալ տարվայ դեկտեմբերի 1 (13)-ին այդ գործը վճռվեցաւ յօգուտ նախկին «Ֆրիստեր և Բօսման» կարեմաքենաների ակցիոներական ընկերութեան Բերլինի մէջ և այդ գործի դրեթէ բոլոր ծախսերը դրված են ամերիկական ընկերութեան վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Տրապիզոն, 31 մարտ 1883

Գարունը եկաւ. դաշտն ու հովիտը ծըլվլ, ծաղիկ սկսան, սառած լեռները կենդանութիւն ստացան, գոմերու մէջ փակուած հօտն ու տաւարը ուրախութեամբ խայտալով ազատ արօտ դուրս կան, թռչունները սկսան երգել, երկինքը պարզվեցաւ, Զատիկը մօտ է և նա իր հետ կը բերէ մեծ ուրախութիւն, մէկ խօսքով տարուայ այն ժամանակն է որ մարդ իւր հայրենիքը ամեն ժամանակից աւելի կը սիրէ, իսկ եթէ հեռու է նորա կարօտը կը յիշէ ու ա՛խ կը քաշէ, բայց ա՜խ, ախ քաշելով ինքզինքը կը մաշէ։ Ճշմարիտ, մեծ դժբաղդութիւն է մարդու համար հեռու լինել իւր հայրենիքէն, իւր ծննդեան օրրանէն զարնան եղանակին՝ երբ սորա ամեն մի երևոյթը իւր սրտին մէջ ուրախ յիշատակներ պիտի զարթեցնէին և զայն մեծ ուրախութեամբ պիտի լցնէին։

Գարունը հաւասար ներգործութիւն կունենայ հողին և մարդուն վրա, հողը կը կենդանացնէ ու մարդուն նոր ոյժ, նոր եռանդ կուտայ։ Բնութիւնը կապած է զանոնք իրար, վայ այն մարդուն որ բնութեան կապը խզելով իւր հայրենի հողէն հեռու կապրի, այնպիսին պիտի կորչի, երկար կեանք չի կարող ունենալ։ Ազգ մը ճիշդ անտառ մը նման է, երբ նա իւր հայրենիքին մէջ կապրի, այն ժամանակ միայն կատարելապէս կը զգայ բնութեան հաճոյքն ու զեղեցկութիւնը, այն ժամանակ միայն կը հիանայ նորա սիրաբ գարնան հրապոյրներով։

Բայց ահա ցաւալի տեսարան. բնութեան վերակենդանութեան այս ժամանակին հայ գիւղացին զոնդաղոնդ կը թողու իւր հայրենի հողը և կերթայ դէպի մայրաքաղաքները մշակութիւն անելու։ Տասը օրէն իվեր Հայաստանի զանազան քաղաքներէն և գիւղերէն 200-ի չափ պանդուխտներ եկան և գնացին Կ. Պոլիս. ինչ կարմիր թըշիր, ինչ վառ աչքեր ունէին, արդեօք ինչպէս պիտի յետ դառնան. բայց մինթէ պիտի դառնան։

Այսօր Կարնոյ առաջնորդ գերապատիւ Օրմանեանը զիմաւորելու համար մինչև ճանապարհին վրայ զանուող հայոց գերեզմանատունը գնացի. այս ճանապարհորդութեանս ժամանակ վշտալի տեսարաններու հանդիսատես եղայ՝ որոնք հոգւոյս վրայ տխուր տպաւորութիւն ըրին և ահա այդ տպաւորութեանց տակ կը նկարագրեմ ոչն չըրջայութիւնս։

Առաւօտ էր. մի քանի ընկերներով քաղքէն դէպի արևելք կերթայինք, կուռելով նոր ծագած արևուն դէմ. մենք ուրախ էինք, որովհետև գերեզմանները պիտի տեսնէինք, բայց մի և նոյն ժամանակ սրտերնիս երկիւղով կը բաբախէր թէ՝ արդեօք ինչ տխուր լուրեր պիտի ստանանք մեր հայրենիքէն։ Գեր. Օրմանեանի յանկարծակի դէպի Պոլիս մեկնիլը բոլորիս անհանգստութիւն կը պատճառէր. չուարած ստոյգ լուրու կը սպասէինք, չափազանցութիւն ըրած չեմ լինիր եթէ ասեմ, Օրմանեանի անձէն աւելի, հաղորդելիք լուրերն զիմաւորելու կերթայինք։ Այս վիճակին մէջ կառաջանայինք. ահա զիմացէն եւրոպացի պատոսի մը գեղեցկուհի մը թեև առած գեղեցիկ մօտ զբօսնելու կերևի, միւս կողմէն հանդիսաւոր երկրագործին աքնին ու քրտնիլը. ինչպէս մոռանել թէ ով է բազդաւոր այս երկրին. իւր հայրենիքէն զրկուած, անդործ կանգնած հիւպատոսը թէ՝ իւր հայրենի հողին մէջ հանդիսաւոր գիւղացին։ Այս մոռածութեանց ընկղմած էի, ահա ճանապարհի խորքէն փոշին բարձրացաւ, բաղմութիւն մը երևեցաւ, 40-ի չափ գիւղացի հայեր էին նոքա դէպի պանդխտութիւն մեկնող. բոլորն էլ ցեխով ու փոշիով ծածկուած, հագնած ոտքերը մերկ, ոմանք ալ բաւական ծեր տեսնելով յոգնած էին և իրենց դաւազանին օգնութեամբ առաջ կերթային։ Երբ այս խումբը տեսան ալ մոռացայ նախկին մտածմունքներս և ես ինձ հեռեւալ վճիռը կայացուցի. ամենէն թշուառ այս ժողովուրդն է, որ իւր հայրենիքը, թող ընտանիքը թողնելով կերթայ խանութ խանութ խոշորներուն հալել ու մաշելու։ Կանգնած երկար կը սպասէի տեսնելու համար այդ պանդուխտներուն ունեցած զոյգերը, բայց ոչ ձի մը և ոչ կառք մը չերևեցաւ զանոնք բերող. հետաքրքրութեամբ հարց ու փորձ ըրի և ցաւելով լսեցի որ նոքա ուրիշ ոչինչ զոյգ չունին, բացի այն պարկէն, որուն մէջ մէկ կտոր չոր հաց դրած իրենց վզերէն կախած ունին. ալ զիւրին է երևակայել մի այսպիսի պանդուխտի վիճակ. յայտնի բան է, ճանապարհին չոր հողի վրայ պառկելով, չոր հացով միայն կերակրուած էին։ Հեռացաւ ամբոխը և մենք բաւական ժամանակ նոցա ետևէն քարացած մտիկ տալէն վերջը չարունակեցինք մեր ճանբայն. կէս ժամէն հասանք վերոյիշեալ գերեզմանատան առջևի պարտէզը և հոն նստանք զբօսնելով սպասելու մեր հիւրին։ Բայց երկինքը կարծես այսօր մեզ համար տխուր տեսարաններու հանդիսատես լինել որոշած էր։ Այնտեղ նոր էինք նստել, մէկ վանեցի ծերուկ մը տեսայ՝ որ գերեզմանատան զոնէն ելլելով, գլխիկոր դէպի դուռը կերթար ձեռքը ջրի սափոր մը բռնած. նորա դէմք խորհրդաւոր տխրութիւն մը ունէր՝ որ ահաւոր գաղտնիքի մը նշանն էր, և ահա յայտնեմ թէ ինչ էր այդ գաղտնիքը։ Ընտանիքի տէր, չորս, հինգ զաւկի տէր, 30 տարեկան մէկ կարիչ վանեցի Կ. Պոլիս կերթայ, իւր վրա ծանրացած հարկերը, իւր վաշխառուին ունեցած պարաքը վճարելու համար և իւր ընտանիքը, ծերացած հօրը կը թողու։ 10-ը տարիներ իրար աշխատելէն, իրար աքնելէն վերջը այս ձմեռ յանկարծ կը լսէ իւր հօրը մահը և իւր ընտանեաց վերջին ծայր թշուառութիւնը. կը սկսի լալ ու հեծել, և տկարանալ, ու այլ ևս չը կարողանալով պանդխտութեան դիմանալ, դարձեր եկածին ճանապարհ կընկնի հայրենիք երթալու և կուգայ Տրապիզոն. հոս խանի մը մէկ անկիւնի մէջ իւր ընտանեացը, իւր հայրենիքին կարօտով կատղել իւր հոգին. եկեղեցւոյ երկու ժամակոչներ դաղաղ մը բերելով դիակը գերեզմանատուն կը փոխադրեն, որպէս զի քահանայ մը բերելով կրօնական կարգը հոն կատարեն ու թաղեն. բայց սափորն ի ձեռին, այն խորհրդաւոր ծերունին նկատելով որ իւր հայրենակիցը, հայրենի աւանդութեանց համեմատ լուացուած, մաքրուած չէ, ինքը ջուր կը բերէ ու սառը ջրով կը լուայ զայն. սառը դիակը սառը ջուրով, անգութ բախտ...

Այս դժբախտ արկածին վրայ կը խօսէի ընկերներուս հետ, երբ քահանայի աղօթքին մրմունջը ականջիս հասաւ. ընկերներուս մէկին հետ ուղղակի գերեզմանատուն դիմեցինք, ուր մէկ քահանայ, մէկ տիրացու և երկու ծեր վանեցիներ կային, ուրիշ ոչ ոք։ Աղօթքը վերջացաւ, պէտք էր դագաղը եղած տեղէն, այսինքն հանդատեան վեմէն, տանել փորուած գերեզմանին մօտ, որ հեռու մէկ անկիւնն էր. մարդ չը կար բանող, չուարած ընկերոջս նայեցի, աչք ըրաւ բռնել դագաղէն, և ես դողալով մօտեցայ ու ընկերոջս հետ վերցուցինք տարինք։ Առաջին անգամն էր, որ ես ննջեցեալի մը դագաղն բռնեցի, որ ինձ վրայ մի անմոռանալի տպաւորութիւն մը գործեց։ Փոս մը փորած էր հողի մէկ արշին երկայնութեամբ, նեղ ու կարճ։ Դիակը դագաղէն հանելով ձգեցինք գերեզմանին մէջ. հսկայ հայը զժուարութեամբ մտաւ այդ նեղ խորշը, և խիստ կարճ մնալով գլուխը դէպի վեր կանգուն մնաց։ Քահանայն օրհնեց հողը, մէկ մէկ բուռ ալ հող ընկերոջս հետ մենք նետեցինք նոյն թշուառ ու կարօտակէզ հայուն անշունչ դիակին վրան. ես ինձմէ տեղեկութիւն չունիմ այն պահուն, դիս մոռցեր էի, բայց ընկերոջս աչքին մէջ կաթիլ արտասուքի սահելը պատահմամբ նշմարեցի, ալ չը կարողացայ մնալ հոն, սրտաբեկ հեռացայ։ Ժամանակը բաւական անցած էր, կէս օրը մօտ էր, մեր սպասած հիւրն ալ հեռուէն երևեցաւ, դիմաւորեցինք զայն, բայց նախկին տպաւորութեանց տակ լինելով տխուր դէմքով մը։ Շատ առողջ և կայտառ տեսայ զեր. Օրմանեանը, երբէք յուսահատ դէմք մը չէր ցոյց տար։ Շարժումն ու խօսուածքն բաւական փութոռած կը հասկցուէր, բայց ինչպէս կերևար այս փորձերը իրեն շատ սուղ նստած պիտի լինէին՝ որովհետև մօրուքներուն մէկ նշանաւոր մասը ճերմակցած էր։ Ուղղակի Առաջնորդարան իջաւ. այնտեղ երթալով երկայն տեսնուեցայ և իւր Կարնէն այսպէս ճապարանօք հեռանալուն պատճառները իրեն բերնէն լսեցի, որոնք հաճառօտ մը հոս կը յիշեմ, մանրամասնութիւնները ապագային թողնելով։ Կարնոյ վալին հակակրութիւն ունի եղեր գեր. Օրմանեանի դէմ, վասն զի վերջինս վալիի ձեռքը գործիք լիներ չէր ուզեր, ուստի Կարնոյ մէջ եղած չարժումները պատճառ բռնելով զանազան տեղեր ամբաստաներ է զանի և նորա անկումը պահանջէր։ Գեր. Օրմանեան այս ամբաստանութեանց առաջն առնելու համար և ապագային աւելի ծանրերուն չենթարկուելու համար Կ. Պոլիս կերթայ լինքզինքը արդարացնելով վերադառնալու համար։ Այս է նորա առժամանակեայ կերպով կարնէն հեռանալուն յայտնի պատճառը, բայց արդեօք, որչափ ծածուկ պատճառներ ու նպատակներ կան։ Գեր. Օրմանեանը վաղը անպատճառ պիտի մեկնի դէպի Կ. Պոլիս։

* * *

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրում կարդում ենք հետևեալը։ Մօտիկ ապագայում Օրբէլեանների ցեղին վերաբերեալ երկու խոշոր պրոցէսներ են սկսվելու։ Բանը նրանումն է, որ անցեալ գարի երկրորդ կիսում, Հնդկաստանում մեռաւ Ժան-Ժակ-Ուրբելեան (Օրբելեան) անունով մէկը։ Նրան մանկութեան ժամանակ գերի առաւ Նադիր-Շահը և Երևանեան խանութիւնից տարաւ Համադան, որտեղից անցաւ Կալկուտա։ Այնտեղ տեղական կառավարիչներից մէկի պալատը ծառայութեան մտնելով, նա շուտով այդ իշխանի հաւատարմութիւնը գրաւեց, նրա զանձապահը դարձաւ և ահագին հարստութիւն ձեռք բերեց։ Անզաւակ մեռնելով, Ուրբելեանը Օտո-Խոդեան բանկում միլիոններ թողեց, որ կասկված էին իր ազգատոհմին, եթէ այդ ազգատոհմի անդամները կը յայտնվեն և հարիւր տարվայ ընթացքում իրանց ազգականութեան օրինական ապացոյցները կը ներկայացնեն։ Այդ ժամանակամիջոցը վերջանում է 1886 թվի նոյեմբերին, երբ կուտակված գումարը մեր փողերով կը հասնի հօ թանասուն միլիոն ռուբլու։ Վերոյիշեալ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ ժառանգները զրկվում են այդ փողը ժառանգելու իրաւունքից։ Ներկայումս այդ ժառանգութեան վրա ակնկալութիւն ունեն և հետամուտ են լինում սատանալու, որքան մեզ յայտնի է, Զանզեզուրո—Նախիջևանեան ճիւղի Ուրբելեաններից երկու անձինք և և նրանք դրագրութիւն են սկսել տուել մեր և անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնների մէջ, և նոյնպէս Էջմիածնի պատրիարքարանում։ Չէ վճռված նոյնպէս հետեւեալ հարցը, թէ տարածվում է արդեօք այդ ժառանգութիւնը իշխան Օրբելեանօվների ցեղի վրայ ճիւղի վրա, թէպէտ վերջինների ազգականութիւնը Նախիջևանեան Ուրբելեանովների հետ հասնում է մինչև XIII-դարը։ Միւս պրոցէսը կայանում է նրա մէջ, որ Հէրակլ II թագաւորը անցեալ դարում դրագրութիւն սկսելով հնդկական հարուստ հայ Շամիրան-աղայի հետ, ընծայեց նրան նրա ուղարկած զարմանալի թանգագին քարերով զարդարված ոսկէ թագի համար, ամբողջ Լօռու գաւառը և Բօրչալուի մի մասը, որ դրանից առաջ թագաւորը խլել էր Օրբելեան իշխանների ազգատոհմից։ Շամիրանը Վրաստան պէտք է դար իր անհամար հարստութիւններով և հաղարաւոր ստրուկ-հնդկացիներով և պէտք է ամեցներ այստեղ լեզակ, որպան կարմիր և չաքարի գործարան պէտք է բանար։ Բայց Շամիրանը չուտով մեռաւ Հնդկաստանում, նրա զաւակները թշուառ կերպով վերջացրին իրանց կեանքը իրանց հօր հիմնած հիւանդանոցում և աղքատանոցում։ Այն ինչ, Վրաստանը կայսրութեան հետ միացնելուց յետոյ էլ կառավարութիւնը սպասում էր Շամիրանի ժառանգների յայտնվելուն և մինչև անդամ Թիֆլիսի զանձապետութիւնը Լօռիից հաւաքած եկամուտների համար առանձին հաշիւ էր պահում։ Իշխան Ցիցիանով (նայիր 2-դ հատոր Акт. Кав. Арх. Ком.) մերժեց իշխ. Օրբելեանօվների պահանջը վերադարձնել նրանց իրանց տոհմական կայքը, առարկելով թէ դեռ ևս կարող են յայտնվել Շամիրանի ժառանգները, որոնց ընծայել է Լօռու գաւառը Հէրակլ II թագաւորը։ Բայց որովհետև Շամիրանի ժառանգները չէին յայտնվում, այդ պատճառով իշխ. Օրբելեանօվների տոհմական կայքը վերադարձրեց նրանց մեր կառավարութիւնը։ Այժմ, որպէս մեզ հասատ յայտնի է, Շամիրանի թոռան որդկերանցից մէկը անգլիական կառավարութեան միջոցով միջնորդում է մեր կառավարութեան մօտ վերադարձնելու նրան Լօռին երկրի բոլոր եկամուտներով 1785 թվից, կամ թէ տալ նրան այդ կալուածների արժողութիւնը։ Շամիրանի ժառանգը իր պահանջը հասցնում է մինչև 12 միլիոն ռուբլու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ Ազնուականների առաջնորդները և մեծատոհմ ազնուականները հրաւիրված են հաւաքվել Մոսկվա թագադրութեան առիթով մայիսի 6-ից ոչ ուշ։ Ազնուականների ներկայացուցիչները հանդիսի ժամանակ Կրեմլի պալատի մէջ, պալատի չափերի համեմատ, իւրաքանչիւր նահանգից չորս մարդ կը լինեն։ Թագադրական հանդիսաւոր գնացքի մէջ կը լինեն 23 ոսկէ կառքեր, 19 կառքեր և 4 ֆաէտոն։ Կօզակներին տուած են գօտիներ հետևեալ գոյներով։ Գվարդիայի կօզակներին սպիտակ, Դոնի և Օրենբուրգի բացմաւի, Ուրալի և Սեմիրեչենսկի—կարմիր գոյնի, Ամուրի, Զաբայկալսկի և Աստրախանի—դեղին, Սիմբիրսկի և Դոնի և Զաբայկալսկի հեծեալ արտիլերիական բատարէյներին և Օրէնբուրգի զօրքերին բաց կարմիր։ Մի մասնաժողով է նշանակված մասնակցած երկաթուղիական ընկերութիւնների գործերը կանոնաւորելու համար։ Ամենից առաջ մասնաժողովը կը զբաղվի Մոր-շանսկի երկաթուղու գործով։ Կօմասնօվի մասնաժողովի նախագծերը ընդհանրապէս մշակված կը լինեն մինչև մայիսի 1-ը։ Ամենքին կը պահանջեն գեմտվօների կարծիքները։ Այսօր յայտնված է դատավճիռը յայտնի քաղաքական գործի վերաբերութեամբ. մեղադրվածներից երեքը դատապարտված են տաժանակիր աշխատանքների հանքերի մէջ առանց ժամանակի, եօթը—15 տարով, չորսը—տաժանակիր աշխատանքների բերդերի մէջ 10 տարով և չորսն էլ հանքերի մէջ 4 տարով։ Վերջին եօթը մեղադրվածները դատապարտված են աքսորի Սիբիրի հեռաւոր տեղերը։ Միայն իրաւաբանութեան կանդիդատ Պեպելնիկով արդարացրած է։

ՄՈՍԿՎԱ, 5 ապրիլի։ Հիւրանոցների և կահաւորված սենեակների ծառաներին, որոնք կը ծածկեն Մոսկվա եկողների իսկական անունները, գլխաւոր նահանգապետը որոշեց՝ մեզաւորներին ենթարկել 25 ր. տուգանքի, կամ կալանաւորման մէկ ամսով և մինչև անգամ պաշտօնից զրկել։ Վերականգնվում է դրոնապանների փողոցային պահապանութիւնը ցերեկով։ „Московскій Листокъ“ լրագիրը հաղորդում է, որ 70,000 ռուբլի գումարի վատնելու պատճառով Բրօնիցկի բանկը դադարեցրեց հատուցումները։

ԼՕՆԴՕՆ, 5 ապրիլի։ Այսօր թագուհին ուղևորվեցաւ Օսբօրն։ Պոլիցիան պահպանում էր բոլոր կայարանները։ Կարլէի գործի քննութեան ժամանակ յայտնվեցաւ, որ Կարլէ հրահանգներ էր տալիս Ֆենիկսպարկի մարդասպաններին և որ դաւադիրները 22 անգամ մտադրվել էին սպանել Ֆօրստերին։

ԼՎՕՎ, 5 ապրիլի։ Կառավարութեան պահանջը մշակել աւստրօ բաժինները Եավօրի մէջ առիթ տուեց զիւղացիներին կռուել զօրքերի հետ. 10 մարդ վիրաւորված են։ Կռուին առիթ տուողները կալանաւորված են։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 5 ապրիլի։ Վճռված է ընդարձակել այստեղի նաւահանգիստը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ" գրավաճառանոցում վաճառվում են ԾԵՐԵՆՑԻ հեռնեալ պատմական րոմանները.

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ........... գինն է 1 ր.
ԵՐԿՈՒՆՔ Թ. ԴԱՐՈՒ.......... — 1 ր.
ԹԷՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ.......... — 1 ր.

Գումարով առնողներին բացի ճանապարհածախսը 20% զիջումն է լինում։

1—3

ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ

ՊԱՍՏԻՌ ՕՒՕՅ ՏԱՐՆՕՊՕԼ եղբայրների չոզէ գործարանից Օդեսայի մէջ, մեծ քանակութեամբ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳՆԵՐՈՎ։ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍԻ մէջ Լօրիս-Մելիքօվսկայա (Ատամանսկայա) փողոց, Ն. Ե. Զուբալօվի տուն, հոգևոր ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ հանդէպ։ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գնողներին ԶԻՋՈՒՄՆ կը լինի։

(Ե. Հ. Չ.) 2—10

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԱՑՆԵԼՈՒ առիթով, ամենաէժան գներով, այսինքն ԱՌՆՎԱԾ ԳՆԵՐԻՑ ՊԱԿԱՍ ծախվում են ՈՍԿԷ, ԱՐԾԱԹԷ ԵՒ ԲՐԻԼԻԱՆՏԻ ԻՐԵՐ ԵՒ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ Դվօրցօվայա փողոց, տուն Զուբալօվի։

Գ. Ն. ԼԱԿՍԻՆ

(Ե. Հ. Ե.) 2—3

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ առենի մէջ նշանակած է աճուրդ սոյն Ապրիլ ամսոյ 8-ին, առանց կրկնաճուրդի, կապալաւ տալոյ համար երկյարկեայ էջմիածնապատկան տունն, որ գտանվում է Տփխիսում Արաս-Արատսկի հրապարակի վերայ, կից էնֆիաճեանցի ծխախոտի գործարանի, № 1.

Անդամ կոնսիստորիայի Մամբրէ վարդապետ

2—2

ՄՈՒՐԱԲԱՆԵՐ խմբէրի, մալինայի, մոշի, **ԲԱԴՐԱՆԳԻ** և այլն։ 5000 դիւժին մաքուր սպիտակ ամաններ 2 ր. 20 կ. և դեսերտի 1 ր. 40 կ.։ **ՇԵՎԵԼԴԻԿԻ** խսկական **ԴԱՆԱԿՆԵՐ** պատառաքաղներով 4 ր. մինչև 18 ր. դիւժինը։ մեծ քանակութեամբ առաջին **ՀՈՒՆՋԻ ԹԷՅ** 1 րուբլուց մինչև 2 ր. (ամենալաւը) ֆունտը առանց թղթի։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։ Նոյն տեղը Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախվում են էժան. **ՍԵՂԱՆ** կարմիր փայտից, **ՎԱՆՆԱՆԵՐ** և զանազան ուրիշ **ԱՊՐԱՆՔՆԵՐ**։

6—10

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ"
ПРОДАЕТСЯ БРОШЮРА
НА РУССКОМЪ ЯЗЫКѢ
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Цѣна 25 копѣекъ.
Соч. Григорія Арцруни.

Մի ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ որ այժմ Թիֆլիսումն է ապրում, կը ցանկանար ուղեկցել մի ընտանիքի դէպի արտասահման։ Համաձայն է նոյնպէս մի հիւանդին ուղեկցել։ Տիկինը խօսում է ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ՖՐԱՆՍԷՐԷՆ և ՌՈՒՍԵՐԷՆ լեզուներով։

ДАМА нѣмка, пріѣхавшая изъ за границы и проживающая теперь въ Тифлисѣ, желала-бы сопровождать семейство или больнаго отъѣзжающихъ заграницу. Говоритъ по французски, по нѣмецки и по-русски.

Адресъ въ редакціи газ. „Мшакъ"

Հասցէ. „Մշակի" խմբագրատանը։

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, վիէննայի ԹՕՆԷԹ ֆաբրիկայի ՄԷԲԷԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմալով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐՃԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող։ գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԽԻՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն

9—100

ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԼԵՐԵԱՈՒՄ

ԴՎՕՐՑՕՎԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ

ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐ ԵՒ ՊԱՀԵՍՏՆԵՐ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ

НА ДВОРЦОВОЙ УЛИЦѢ

ОТДАЮТСЯ ПОМѢЩЕНІЯ

Подъ МАГАЗИНЫ, СКЛАДЫ и КОНТОРЫ

ՆԵՐԿԱՅ 1883 ԹՎԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

„ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ"

ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է Երևանում 1 րուբլի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունվում են ՀԱՅԵՐԷՆ, ՌՈՒՍԵՐԷՆ և ԹՈՒՐՔԵՐԷՆ լեզուներով

Խմբագիր-Հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐ (ԱՊՐԻԼԻ 5) — Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ — „ՀԻՒՍԻՍԱՅԻՆ" ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մուրհակների կուրսը 3 ամսով Լօնդօնի վրա	$23\frac{7}{8}$ պէնս
» » 3 » Ամստերդամի վրա	»
» » 3 » Համբուրգի վրա	$203\frac{1}{2}$ պֆ.
» » 3 » փարիզի վրա	$251\frac{1}{4}$ սանտ.
Ոսկի	8 ր. 25 կ.
Արծաթ	1 ր. 37 կ.
Մաքսային կուպօններ	8 ր. 18 կ.
Բօրսային դիսկօնտներ	$6\frac{1}{2}$%
Պետական բանկի 5% տոմսակ 1-ին շրջանի	$95\frac{1}{2}$ ր.
» » » » 2 »	$92\frac{1}{4}$ ր.
» » » » 3 »	$92\frac{1}{2}$ ր.
» » » » 4 »	92 ր.
» » » » 5 »	92 ր. 37 կ.
Արևելեան 1 փոխառութեան տոմսակը	91 ր. 50 կ.
» 2 » »	91 ր. 50 կ.
» » » »	91 ր. 50 կ.
Ներքին 5% 1 փոխառութեան տոմսակը	220 ր.
» » 2 » »	$219\frac{3}{4}$ ր.
$5\frac{1}{2}$% րենտա	100 ր.
Ակցիաներ փոխառու բանկի	453 ր.
» Միջազգային բանկի	366 ր.
» Վօլժսկօ—Կամսկի բանկի	$435\frac{1}{2}$ ր.
» Սիբիրի առևտրական բանկի	340 ր.
» Ռուսաց արտաքին առևտրի բանկի	265 ր.
» Ռուսաց կալուածական կրեդիտի կենտրօն. բանկի	»
» Ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկ.	$259\frac{3}{4}$ ր.
» Րիբինսկօ-Վօլօգօվսկի երկաթուղու	$59\frac{1}{4}$ ր.
» Ս. Պետերբ. կրակի դէմ ապահովութեան ընկ.	»
5% գրաւական թերթեր փոխադ. կալուած. կրեդ. ընկ.	134 ր. 50 կ.
6% » Խարկօվի կալուած. բանկի $43\frac{1}{2}$ տարի	92 ր. 62 կ.
» » Վիլնօյի » » » »	92 ր. 75 կ.
» » Պօլտավայի » » » »	92 ր. 25 կ.
» » Մօսկվայի » » » »	$97\frac{1}{4}$ ր.
» » Բես.—Տավ. » » » »	$92\frac{1}{2}$ ր.
$5\frac{1}{2}$% » Խերսօնի » » » »	91 ր.
Բօրսայի տրամադրութիւնը	Հանգիստ
Ցորեն ռուսաց 10 պուդ	13 ր. 25 կ.

Ցորեն սակսօնկա » »	13 ր. 50 կ.
Ցորեն	Հանդարտ
Հաճար 9 պուդ	9 ր.
Հաճար	Հանդարտ
Վարսակ 6 պուդ	4 ր. 80 կ.
Վարսակ	Թոյլ
Գարի 8 պուդ	8 ր. 40 կ.
Վուշի սերմ 9 պուդ	14 ր.
Հաճարի ալիւր 9 պուդ	8 ր. 90 կ.
Ալիւրը	Հանդարտ
Կանեփ Րժևի	43 ր.
» սովորական	41 ր.
» ընտիր	»
Թել Սիբիրի	42 ր.
» Կամայի	$41\frac{1}{2}$ ր.
Վուշ	Ամուր
Կանեփ	Թոյլ
Կրուպչատկա Սարատօվի 5 պուդ	$12\frac{3}{4}$ ր.
» Նիժեգօրօդեան 5 պուդ	$12\frac{1}{2}$ ր.
Լիլիփարի ձէթ քաղցր	8 ր. 80 կ.
Կերօսին ամերիկական	2 ր. 40 կ.
» ռուսաց	1 ր. 40 կ.
Ձէթ	$10\frac{1}{2}$ ր.
Ճրագու դեղին մոմի համար 2 անգամ հալուած 1 տեսակ	$75\frac{1}{2}$ ր.
» սապօնի	73 ր.
Խէժ ֆինլանդական	»
Կովի խղ Սիբիրի	10 ր. 80 կ.
Պղինձ կտորներով պուդը	$14\frac{1}{4}$ ր.
» թերթերով »	»
Երկաթ թերթերով պուդը	$3\frac{3}{4}$ ր.
Կովի կաշի չոր, պուդը	$13\frac{1}{2}$ կ.
» » Ամերիկական »	$5\frac{1}{4}$ ր.
Սպիրտ 40% վեդրօն	» 83 կ.
Շաքար ռաֆինադ 1 տեսակ պուդը	8 ր. 80 կ.
» » 2 » »	»
Շաքարաւազ	8 ր. 10 կ.
Պոտաշ բերկօվեց	28 ր.

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Апрѣля 1883 года. Типогр. Главн. Упр.Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.